# Կոտայքի մարզպետն աշխատանքային այցով Մեղրաձոր խոշորացված համայնքում էր

05.04.2019

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն այսօր աշխատանքային շրջայց կատարեց Մեղրաձոր խոշորացված համայնքում:

Մարզպետը համայնքի ղեկավար Կաղեն Հովհաննիսյանի ուղեկցությամբ այցելել է Արտավազ վարչական շրջանի մանկապարտեզ, շրջել շենքի տարածքում, ծանոթացել պայմաններին:

Արտավազ գյուղը երկար տարիներ մանկապարտեզ չի ունեցել: 2014 թվականին համայնքի բյուջեի միջոցներով և «Սոս» Հիմնադրամի հատկացումներով գյուղում մանկապարտեզ է կառուցվել, սակայն չի գործել: Հետագայում ձեռք է բերվել նաև գույքը, իսկ վերջերս Մեղրաձոր համայնքի բյուջեի հատկացումներով ձեռք է բերվել նաև ներքին կահավորանքի և հարդարանքի համար անհրաժեշտ պարագաները:

Մայիսի 1-ին բացվող մանկապարտեզում առայժմ գործելու է 1 խումբ՝ 30 սանով՝ Արտավազ և Փյունիկ բնակավայրերից:

Մարզպետը կարևորել է մանկապարտեզի առկայությունը՝ որպես նախադպրոցական կրթության ապահովման տեսանկյունից ՏԻՄ ղեկավարի պարտադիր խնդիրների լուծման փաստ:

Հաջորդ կանգառը «Մարմարիկի ջրամբար»ի տարածքում էր: Մարզպետը հետաքրքրվել է ջրամբարի ներկայիս տարողունակությամբ և ծավալներով («Մարմարիկի ջրամբար»ն ունի 24 մլն.խմ տարողունակություն և 23 մետր բարձրություն. այս պահին կուտակված պաշարները մոտ 7 մլն. խմ են):

Հանքավանի վարչական ղեկավարը մարզպետին ներկայացրել է բնակավայրի խնդիրները. դրանց մի մասի վերաբերյալ կարճաժամկետ պլանում լուծումներ է առաջարկվել:

Գյուղացիներին անհանգստացնում էր գազաֆիկացման և աշակերտերին դպրոց ճանապարհելու նպատակով տրանսպորտի տրամադրման խնդիրները: Մարզպետը վստահեցրել է, որ համապատասխան մարմինների հետ քննարկումներն ավելի ինտենսիվ փուլ կմտնեն ու դրանց լուծումներն ամենամոտ ժամանակահատվածում իրատեսական են:

Վարչական շրջաններում շրջայց կատարելուց հետո Մեղրաձորի համայնքապետարանում աշխատանքային խորհրդակցություն է տեղի ունեցել համայնքի կազմում գտնվող բնակավայրերի վարչական ղեկավարների մասնակցությամբ:

Մարզպետը ծանոթացել է 2018 թվականի ընթացքում հաստատված սուբվենցիոն և առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների ծրագրերով համայնքներում

իրականացվող աշխատանքների ընթացքին և անդրադարձել նաև 2019 թվականին կառավարություն ներկայացրած սուբվենցիոն ծրագրային հայտերին:

Ընդգծվել է, որ ֆինանսական միջոցների վերաբաշխման արդյունքում ամենամոտ ժամանակներում հնարավոր կլինի վերանորոգել Արտավազի և Աղավնաձորի դպրոցների սանհանգույցները, ինչպես նաև Փյունիկի դպրոցի տանիքը:

Կարևորվել է նաև Աղավնաձորի մանկապարտեզի հիմնանորոգումը, որը կիրականացվի 2019 թվականին կառավարություն ներկայացրած սուբվենցիոն ծրագրային հայտի հաստատման դեպքում:

Այցի կոնտեքստում մարզպետի կողմից կարևորվել է մարզի համայնքներն ուշադրության կենտրոնում պահելը և ընթացիկ աշխատանքների վերաբերյալ քննարկումները՝ հատկապես գյուղական բնակավայրերում կյանքի որակը ժամ առաջ բարելավելու նպատակով: